

ՏԱՍՆ ԵՒ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 7 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Երբ հասցէն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից):

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լեղումով:

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր թաւին 2 կոպէկ:

Армянская газета „МШАКЪ“ печатаетъ объявленія на армянскомъ, русскомъ и иностранныхъ языкахъ.

ПЛАТА за объявленія на четвертой страницѣ: 2 копѣйки со слова. Съ объявленіемъ печатаемыхъ болѣе десяти разъ, дѣлается уступка.

Плата впередъ.

За ТРАУРНЫЯ объявленія на четвертой страницѣ взимается по 2 рубля, на первой страницѣ 4 рубля.

На первой страницѣ „Мшака“ никакія постороннія объявленія КРОМѢ ТРАУРНЫХЪ не печатаются.

Адресъ: ТИФЛИСЪ, редакція газ. „Мшакъ“.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Նխախտոր մենավաճառութիւնը. — ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ կարտից. Նամակ Աղտաֆա-
յից. Նամակ Խմբագրին. Նամակ Խմբագրին. Ներ-
քին լուրեր. —ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Գերմանա-
կան ֆինանսական արշաւանքը ռուսաց արժէթը-
թերի դէմ. Նամակ Պարսկաստանից. Արտաքին
լուրեր. —ՀԵՌԱԳԻՆՆԵՐ. —ԲՈՐՍՍԱ. —ՅԱՅՏԱՐԱՐՈՒ-
ԹԻՒՆՆԵՐ.

ՄԵՆԱԿԱՎԱՃԱՌՈՒԹԻՒՆ

Որովհետեւ այժմ հարց կայ մտցնելու
ձխախտոր մենավաճառութիւնը թէ Գեր-
մանիայում և թէ մեզ մօտ, Ռուսաստա-
նում, հետաքրքիր է մի հարկանցի հա-
յեացք գցել ձխախտոր մենավաճառու-
թեան գործի վրա այն երկիրներում որտեղ
նա արդէն վաղուց մտցրած է:

Կառավարչական մենավաճառութիւն ա-
նուանվում է այնպիսի գործողութիւն, ո-
րով մի որ և է կառավարութիւն միմիայն
իրան է վերապահում իրաւունք արդիւ-
նաբերել կամ մշակել այս կամ այն մթերքը:
Նխախտոր մենավաճառութեան ժամանակ
թէն մասնաւոր անձինք իրաւունք ունեն
ցանել ձխախտոր բոյսը, ունենալ ձխախտոր
պլանտացիաները, բայց իրաւունք չունեն
ձխախտոր ֆաբրիկաներ ունենալ, պատ-
րաստել ձխախտոր տերեւները, գործածու-
թեան համար պատրաստել թխմաբաւու-
ր, պակրոսներ, կամ սիգարներ, այլ պարտա-
ւոր են թխմաբաւուր տերեւները ծախել կա-
ռավարութեանը, որ միակ իրաւունք ունի
ձխախտոր ֆաբրիկաներ ունենալ: Նխախտ-
որ կառավարչական մենավաճառութեան
գլխաւոր նպատակն է բարձրացնել պետական
ֆինանսները, ստանալ այդ բերքից մի մեծ
կիսամուտ, որը մենավաճառութիւնից առաջ
ստանում էին մասնաւոր ձեռնարկողները:
Ուրեմն մասնաւոր արդիւնաբերողներին փո-
խարէն՝ պետութիւնը, իր պաշտօնականութիւնով
արդիւնաբերող է դառնում:

Այժմ նայենք թէ այն երկիրներում, որ-
տեղ վաղուց է արդէն մտցրած է ձխախտ-
որ մենավաճառութիւնը (մօնօպօլ), ո՞րքան
է շահավտ կառավարութիւնը՝ ձխախտա-
բերութեան մէջ ինքն անձամբ արդիւնա-
բերող, ֆաբրիկանտ դառնալով և արդեօք
ստանում է նա արդիւնաբերութեան այդ
ձիւղից այն մեծ եկամուտը, որ սպասում
էր ստանալ, երբ մտցնում էր այդ մենավա-
ճառութիւնը:

Յայտնի է որ Ամերիկայում չը կայ ձխ-
ախտոր պետական մենավաճառութիւն,
այնտեղ կայ միայն այն ակցիզային սխտե-
նում, որը նմանը կայ այժմ և Ռուսաստա-
նում Ամերիկայի Միացեալ-Նահանգներում
ձխախտոր արդիւնաբերութեան մշակվում և
պատրաստվում է մասնաւոր արդիւնաբեր-
չների, մասնաւոր ձեռնարկողների ձեռքով և
միայն երկրորդական է պետական հարկա-
ւորութիւնները, որ ակցիզ է անուանվում:
Եւ այդ ակցիզը տալիս է պետութեանը
տարեկան, մեր փողով հաշւած, մօտ 50 մի-
լիօն ռուբլի դուտ արդիւնք: Այլիցը որ
հիմնվում է բան դրոշմային սխտեմի
վրա, երբեք չէ մեղաւոր մասնաւոր ար-
դիւնաբերութիւնը, այլ ընդհանրապէս նը-
պաստում է նրա ծաղկմանը: Այդպիսով

չորհուրդ ակցիզային սխտեմի չիւստային
Ամերիկայի հանրապետութեան մէջ ձխա-
խտոր արդիւնաբերութեան չափը հասնում
է այժմ տարեկան 13 միլիօն պուլի:

Ուրիշ կողմից յայտնի է, որ Եւրոպայի
բոլոր երկրներին միմիայն երեք երկիրնե-
րում՝ Ֆրանսիայում, Աւստրիայում և Իտա-
լիայում է մտցրած ձխախտոր պետական
մենավաճառութիւնը: Եւ հաշիւ չէ հետե-
ւանքներ է տուել ձխախտոր մօնօպօլը այդ
երկիրներում:

Ֆրանսիայում թաւաբաւուր մօնօպօլը
մտցրած է եղել դեռ ևս 1811 թւին, և
մօնօպօլի մտցնելու նոյն իսկ առաջին տա-
րում ձխախտոր մասնաւոր պլանտացիանե-
րի թիւը կիսով չափ (այսինքն 50⁰/₁₀-ով)
պակասեց: Մինչև մօնօպօլի մտցնելը Ֆր-
անսիայում մշակում էին ձխախտ 14,400
հեկտար հողի տարածութեան վրա, իսկ
մօնօպօլի մտցնելուց մի տարի անցած
պլանտացիաների քանակութիւնը իջաւ
մինչև 7,138 հեկտար: Միայն եօթնամե-
սու ընթացքի անցնելուց յետոյ ձխախտոր
պլանտացիաների քանակութիւնը կրկին ա-
ռաջվաջ չափին հասաւ: Բայց դարձեալ և
այս րօպէիս Ֆրանսիական կառավարչական
արդիւնաբերութիւնը չէ կարողանում բա-
ւականացնել երկրի պահանջին ձխախտի
գործածութեան վերաբերմամբ: Նխախտոր
մասնաւոր արդիւնաբերութիւնը արդեօք
վաճելով իր երկրը լրացնում է ներքին
սպաւուման, ներքին գործածութեան համար
անհրաժեշտ պակասորդը՝ ներմուծելով օ-
տար երկրներից ձխախտի ամբողջ գոր-
ծածութեան 56 պրօցէնտը:

Գրեթէ նոյն դրութեան մէջ է գտնվում
և Աւստրիայի ու Իտալիայի ձխախտոր կա-
ռավարչական մենավաճառութեան գործը:

Մօնօպօլի ժամանակ, ուրեմն, չէ էլ կա-
րելի մտածել անգամ ձխախտոր մասնաւոր
պլանտացիաների զարգացման և բազմա-
ցնելու մասին: Բայց մօնօպօլը, առհասա-
րակ, ներկայացնում է և մի ուրիշ զգալի
միաս ժողովրդական անտեսութեան համար:
Պետութիւնը, երբ յանձն է առնում ֆաբ-
րիկանտի դերը, երբեք չէ կարող ոչինչ
ապրանք այնքան էփան գնով արդիւնաբե-
րել, որքան մասնաւոր ձեռնարկողները, ո-
րոնց մէջ հաստատվում է անպատճառ մի
յայտնի մրցութիւն: Գերմանիայում և
Շվեյցարիայում, որտեղ ձխախտոր մենավա-
ճառութիւնը գոյութիւն չունի՝ թաւաբա-
ւունք, պակրոսը և սիգարը անհամեմատ
էփան են, քան թէ նոյն տեսակի թաւաբա-
ւունք, պակրոսը և սիգարը Ֆրանսիայում,
Իտալիայում կամ Աւստրիայում: Երբ մի
ապրանքի արդիւնաբերողը ինքն պետու-
թիւնն է, ամեն բան արդիւնաբերութեան
մէջ նրան աւելի թանկ է նստում, քան
թէ մասնաւոր արդիւնաբերողին: Երբ ար-
դիւնաբերողը ոչ թէ իր արդիւնաբերու-
թեան շահի մէջ հետաքրքրված ֆաբրիկան-
տն է, այլ կառավարչական պաշտօնեան,
արդիւնաբերութիւնը դառնում է մի մեքե-
նայական գործողութիւն, որտեղ չէ կարող
դեր խաղալ ոչ մասնաւոր ձեռնարկողին
յատուկ եռանդը, բերքի արդիւնաբերական
բարելաւորութեան և կատարելագործութեան
մէջ անհրաժեշտ նախաձեռնութիւնը, և
այլն: Գործի առաջադիմութեան մէջ անձ-
նական շահ չունեցող պաշտօնեաները չեն
կարող և պէտք չունեն գլուխ դնել արդիւ-

նաբերութեան տեսիլիական առաջա-
դիմութեանը:

Արդիւնաբերութեան ձեւը միակերպ ան-
շարժութեան մէջ է մնում կառավարչական
մօնօպօլի ձեռքում: Ամեն արդիւնաբերու-
թեան և տեխնիկական միջոցներ էլ աւելի
մեծ ծախս նստելով կառավարութեանը,
քան թէ մասնաւոր ձեռնարկողին, կառա-
վարութիւնը ստիպված է, ուրեմն, իր ար-
դիւնաբերածը համեմատաբար միշտ աւելի
թանկ գնով ծախել, քան թէ կարող էր
նոյն ապրանքը ծախել մասնաւոր գործա-
րանատէրը: Այլ ևս չենք խօսում այն իրո-
ղութեան մասին, որ ամեն երկրում որ և
է արդիւնաբերութեան կառավարչական
մօնօպօլը ձեռնարկողական կերպով ծնեց-
նում է միշտ երկու չարիքներ՝ առաջինը,
—կօնտրաւորութեան է, իսկ երկրորդը, —պաշ-
տօնեաների կաշառակերութիւնն է:

Մի ընդարձակ երկրի մէջ, մասնաւոր
դժուար է պահպանել ցամաքային սահ-
մանները կօնտրաւորայից, աչքի առաջ
ունենալով մասնաւոր և այն համագումարը,
որ թաւաբաւուր կօնտրաւորութեան ամենա-
հեշտ գործադրելի կօնտրաւորանքներին է:
Իսկ ինչ որ վերաբերվում է պաշտօնեաների
կաշառակերութեանը, այնպիսի բարեկարգ
երկրում էլ, ինչպէս, օրինակ, Աւստրիան
է, ձխախտոր արդիւնաբերութեան գործին
վերահսկող պաշտօնեաների կաշառակերու-
թիւնը և ամեն տեսակ զեղծումները յայտ-
նի են ամբողջ աշխարհին: Մասնաւոր պը-
րանտացիաներ ունեցողը, իրաւունք չունե-
նալով մշակել ձխախտոր, ստիպված լինե-
լով ծախել իր արդիւնքը միակ գործարա-
նատէրով, այն է պետութեանը, իր բերքը
լաւ գնով կառավարութեան վրա սաղա-
ցնելով համար, առանց այլ և այլութեան
գտնում է մի քանի թղթադրամներ այն
մատենի մէջ, որի մէջ նշանակված է ծախ-
վող թաւաբաւուր քանակութիւնը և թղթ-
թաղթամը ներկայացնող մատենանը ներ-
կայացնում է այն պաշտօնեային, որին
յանձնված է ընդունել ձխախտոր: Պարզ
է որ այն ձխախտոր լաւ տեսակի ձխախտ
կը ձանաչվի ընդունող պաշտօնեայից, որի
տէքը աւելի մեծ քանակութիւն թղթադր-
ամի է ներկայել իր մատենանի մէջ: Ընդ-
հանազան աւելի չքաւոր ձխախտատա-
րով բերքը անպիտան կը համարվի և չի
էլ ընդունվի, որը մոռացել, քաշվել է, ան-
աղին է համարել, կամ միջոց չէ ունեցել
մատենանի մէջ ներկայել ձաւաւարախօս
թղթադրամները:

Վերջացնում ենք մեր խօսքը կրկնելով,
որ ակցիզային բանիւրօլային սխտեմը հա-
զար անգամ աւելի ձեռնտու և շահաւէտ
է թէ մասնաւոր ձեռնարկողի, ազգային
անտեսութեան համար և թէ իրան պե-
տութեան ֆինանսական շահերի համար:
Այլիցը ձխախտոր վրա աւելի պակաս
զեղծումների է տեղի տալիս, քան թէ մե-
նավաճառութիւնը, աւելի էփան է դարձ-
նում ձխախտոր, քան թէ մօնօպօլի ժամա-
նակ, և վերջի վերջոյ աւելի էլ մեծ եկա-
մուտ է տալիս կառավարութեանը, քան
թէ մենավաճառութիւնը:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԿԱՐՏԻՑ

Օգոստոսի 29-ին

Ամսի 12-ին կարտի հայ ժողովրդի մէջ մի
տեսակ կենդանութիւն էր նշմարվում. այդ օրը նա
ապաստում էր թիմին առաջնորդ Սուքիաս կալի-
կապտ Պարզեանից զաւտեանը: Կէսօրից յետոյ
ժամը 6-ին երեցեալ արքայանի կառքը, ուղեկցու-
թեամբ 20-ի չորի կառքերի և 50-ից աւելի ձիա-
ւորների, որոնք 20 վերստի երկ ընդառաջ էին
գնացել սրբազանի զիմաւորելու ֆաղաքի մօտ
ժողովրդի բազմութիւնը սպասում էր սրբազանին:

Կառքից իջնելով սրբ. Պարզեանի զիմնց ս. Աս-
տուածածին եկեղեցին, որտեղ նրան դիմաւորեց
տեղիս փոխանորդ սրբազան Գրիգորիս եպիսկո-
պոս Աղուանեանց և հոգևորական դասը: Եկեղե-
ցում սրբ. Պարզեանց մի քանի ջերմ խօսքերով
ժողովրդին ողջունելուց յետոյ իջնանց տեղիս
ղէպուտատ և ուսումնարանի հոգաբարձու Դաւիթ
աղա Միրմանեանցի տանը: Հետեալ օրը սրբա-
զանը ի տես դնաց պ. նահանգապետի և նրա
մերձաւոր պաշտօնակիցներին, այլ և այցելեց ա-
նուանի քաղաքացիներին: Իր գալու երրորդ օրը՝
առաջնորդը սկսեց զննել հոգևոր և ուսումնարա-
նական գործերը: Ամսի 15-ին պատարագի մի-
ջոցին սրբազանը մի ջերմ քարոզով ազգ ու հայ-
րենիք, հայկական բարեպաշտութիւն յիշեցրեց,
աստուածային խաղաղութիւն, եղբայրական սէր
և միաբանութիւն ունենալ պատուիրեց և կենդա-
նի խօսքի ազդեցութեան տակ թողացին օրտեր:
Պատարագից յետոյ՝ սրբազանի հրաւիրանօք ու-
սումնարանի դահլիճում ժողով կայացաւ, որտեղ
սրբազանը մի ատենաբանութեամբ յիշեցրեց մի
եկեղեցու յարմարաւոր շինութեան անհրաժեշ-
տութիւնը՝ առաջարկեց մի ժառանգեալ մատենա-
ւորդրեց ստորագրութիւն բանալ յօդուտ եկե-
ղեցու շինութեան: Երկու ժամկայ մէջ ստորա-
գրութեամբ զոյացաւ աւելի քան 8,000 ռուբլի:
Այս ընտրվեցան 12 անձինք, որոնք և շարու-
նակելու են հանգանակութիւնը: Սրբազանը խոս-
տացաւ Վ.Է. Կաթողիկոսից կոնգակ ստանալ Ե-
րևանի թեմում, մասամբ և այլ տեղերում հանդի-
նակութիւն բաց անելու, որպէս զի կարելի լինի
Առասպէն եկեղեցու ձեռք, բայց նրանից ըն-
դարձակ մի եկեղեցի կանգնեցնել: Սրբազան
Պարզեանց ցանկանալով մուրացիկ վիճակից ա-
զատել տեղիս ուսումնարանը, հոգ տարաւ ու-
սումնարանի նիւթական կողմը ապահովել: Ներ-
կայումս ուսումնարանը կունենայ տարեկան հինգ
հազար ռուբլի ծախք, որից 2,500 ռուբլին դուրս
կը գալ թոշակադրամից և եկեղեցիներից ստանա-
լի գումարներից, իսկ մնացածը բաց է մնում, ո-
րը և ժողովուրդը, համաձայն իր խոստման լրա-
ցնում է: Սրբազանը անօրինեց այժմանից իսկ
եկեղեցու տեղի վրա բաց անել մոմավաճառու-
թեան կրպակ, օրէնքի դրութեամբ պարտաւորել
վիճակիս եկեղեցիների երեցփոխներին, որ մօմ
գնեն բացառապէս տեղիս կրպակից և դրա ար-
դիւնքը, որ 1,000 ռուբլուց աւելի կը լինի, յատ-
կացնել ուսումնարանին: Զրափարված հոգաբար-
ձութիւնը վերստին յանձն առաւ իր պաշտօնը և
լինելի ներկայացրեց սրբազան Պարզեանցին Տալ-
լարի հողերի եկամուտը—տարեկան 1,000 ռուբ-
լի—յատկացնել ուսումնարանին: Կառուցանելի
եկեղեցու գաւթում կրպակներ յիշվելից յետոյ,
տեղիս ուսումնարանը արդէն բոլորովին ապա-
հոված կը լինի: Ուսուցչական խումբը կազմա-
կերպվում է և սեպտեմբերի սկզբներին ուսումն-
արանը կը բացվի: Այս տարի բազմում են տը-
ղայոց ուսումնարանի II դասարան II բաժան-
մունքը և օրիորդաց ուսումնարանի I դասարան
III բաժանմունքը: Ամսի 23-ին ուսումնարանի
դահլիճում դարձեալ ժողով կայացաւ ս. Աստուա-
ծածին եկեղեցու երեցփոխ ընտրելու համար:
ձայների բազմութեամբ ընտրվեցաւ Մովսէս-բէկ
տէր-Սարգսեանց, որ ս. Նշան եկեղեցու երեցփոխ
լինելով, իր արդիւնաւէտ գործունէութեամբ դրա-
ւել էր ժողովրդի հաւատը: Սրբազան Պարզեանց
այցելեց խժկօնից (Բէշ-քիլիսայ) վանքը և բաւա-
կան մնաց վանքի դրութիւնից: Այցելեց և Կաղ-
դուան քաղաքը և նրանից 5—6 ժամ հեռաւորու-
թեան վրա գտնվող Թաթուլ և Վարոս ճգնաւոր-
ների վանքը (Վարդիսի): Վերջապէս ամսի 28-ին
բազմութիւն ժողովրդի ուղեկցութեամբ մեկնեցաւ
այստեղից դէպի իր պաշտօնատեղի, օրհնելով
կարտի բարեպաշտ ժողովուրդը: Սրբազանի այս-
տեղ կատարած գործերը շատ էին, օրինակ, նա
կարողացրեց եկեղեցական և ուսումնարանական
գործերը, անօրինեց, որ քաղաքում բնակվող քա-
հանները անշուշտ ծովս ունենան, իսկ մի քանի

քահանաների էլ ուղարկեց զիւղերը, յորդորեց բանալ վանական դպրոց խնամելով վանքում, Մրէ-նի հոգեւորական վանքի համար հող տալու վանա-հայր ուղարկելու և վանքի նորոգութեան աշխա-տելու և վարդիւնների վանքի համար էլ զիւղերու-թիւն ունի մի վարդապետ ուղարկելու Սրբազա-նը ցանկանում է որ ուսումնական երիտասարդ-ներ պատրաստ լինեն քահանայական աստիճանի, որպէս զի կարողանան մատուցանել իրանց ազ-գին կարեւոր ծառայութիւնը:

ՆԱՄԱԿ ԱՂԱՍԱՑԱՅԻՑ

Օգոստոսի 27-ին .

Երկաթուղիները համար կառավարութեան կող-մից կայ մի ընդհանուր օրէնք, մի օրէնք, որին հաստատելու են Ռուսաստանի մէջ եղող համա-րեա բոլոր երկաթուղիները վարչութիւնները. բայց և այնպէս իւրաքանչիւրը այդ ընկերութիւն-ներէն ապրանքների տեղափոխութեան համար ու-նի իր սեփական կրօնֆիկացիան և տարիֆը: Համապարհունը հաղորդակցութեան միջոցառու-թեան մէջ այս տարի հարց ծագեց այդ տարիֆ-ները ևս ենթարկել կառավարութեան իրաւուն-քին: Այնպէս, իրականութեան կը ստանայ այդ թէ ոչ, այդ դեռ մի կողմից Մեր երկրի արդիւնաբե-րողները, մեր երկրի մէջ երկաթուղու հետ գործ ունեցողները մեծ մասամբ տեղացի միջին դասա-կարգի մարդիկ են. հարկերը մէկը դրանցից ծա-նօթ չէ երկաթուղու կարգերին և տարիֆներին. տալիս են, ինչ որ ուզում են, առանց ամենին հետաքրքրուելու, առանց ամենին ուղարկութիւն դարձնելու թէ արդեօք ստանում են իրանցից այնքան, ինչքան իրանց կը հասնի թէ ոչ, և հէնց այդ հանգամանքի պատճառով էլ տուժում են շատ անգամ, և տուժում են սարսափելի կերպով: Հատ մօտիկ, և համարեա ամեն օր, գործ ունե-նալով երկաթուղու հետ, մենք համարեա ամեն մի քայլում պատահում ենք այնպիսի անարդա-րութիւններին, որոնք մարդու խիղճը տանջում են և զարմանալին այն է, որ սխալմամբ երկաթու-ղուն աւել տուղները շատ անգամ լինում են այն-պիսի տուժարեա տներ, այնպիսի վաճառական-ներ, որոնց յանցանք է մինչև անգամ երկաթու-ղու օրէնքները և սակազուելի ձեռնարկը չունե-նալ: Չը գիտեմ ուրիշ երկրներում, բայց մեր անդրկովկասեան երկաթուղու օրէնքով այն գու-մարը, որ գրված է լինում անարդարութիւն վրա, որ-պէս արժէք նշանակված ապրանքների տեղափո-խութեան, դիմացի կայարանի կասկերը, ուր ապ-րանքը պիտի յանձնվի, պարտաւոր է ստուգել, երեսը որ պատկան է նշանակված նա կառնի մին-չև վերջին կօպէկը. իսկ եթէ նշանակված է աւե-լի քան հարկաւոր է, նոյն իսկ եթէ 5 ռուբլի տեղ նշանակված լինի 500 ռուբլի, այդ 500 ռուբ-լին չառած կասկերը իրաւունք չունի ապրանքը ձեռ տալու: Նա կառնի առանց այդ մասին ձեռ ոչինչ ասելու: Եթէ կիմանա, խնդրել կը տաք թիֆլիսի վարչութեան, ձեռ փողերը մի ամից յետ կը դարձնեն ձեռ, եթէ չէ իմանայ և կամ մինչև որոշեալ ժամանակ չէք պահանջի, ձե-ղանից ստացած այդ աւել գումարի վրա երկա-թուղու վարչութիւնը իր հողացն հանգուցիլը կը կարգայ: Երկաթուղու տարիֆները կազմված են կոտորակներով. հաշուները տան և հինգ ռուբլի ստացող և մինչև կողորդ գործի մէջ թաղ-ված դրաղիներ են. պարզ բան է կը սխալվեն. պակասին արկային են որ կառնեն. հակառակ դէպքում կասկերի ռոճկից դուրս կը գան, իսկ աւելորդի համար ձայն չեն հանում:

Օրէնքով, այսինքն ոչ անդրկովկասեան երկա-թուղու, այլ խղճի օրէնքով, աւել առնված գու-մարները, կամ, վերջապէս, աւել նշանակված գումարները, ապրանքը յանձնող կասկերները չը պէտք է ստանալին, առնելով միայն համաձայն տարիֆի իրանց ստանալիքը: Հնարաւ կուզմիշ— մի անգամ նկատեցի ես այստեղի մեր կասկերին— ինչու գրեմ մի անգամ չէք յայտնում այն ապ-րանքատերերին, որոնցից համարեա ամեն օր սխալմամբ նշանակված տարիֆից աւելի «переплатили» ենք ստանում, որ իրանցից այսքան գումար աւել է առնելով թող խնդրել տան յետ ստանալու: Թէ չէ մի որ և է Մաշադի Մամադ ինչ կարող է հասկանալ թէ իր ապրանքից այս ինչ կայարանից մինչև այս ինչը ինչ արժէ. նա տալիս է, կատարելապէս հաւատարմաց լինելով, որ իրանց աւել չեն առնի:

— Կրա համար եթէ իմանան, իսկոյն կը հրա-

ժարեցնեն ինձ պաշտօնիցս», — պատասխանեց նա ինձ:

Որքան անխիղճ և... անարդարութիւն: Մենք մատնացուց եղանակ այդ բանի վրա, և թող նը-րանք, որոնք գործ ունեն և որոնց կը պատահի գործ ունենալ մեր երկաթուղու հետ, չեղտու-նը, զգոյշ լինեն. այդ սխալմամբ ներք, ու-րոնց մի որով ժամանակից երկաթուղու վարչու-թիւնը իրան իրաւունք է համարում այլ ևս ա-մենին չը վերադարձնել, հինգ, տաս, հարիւր ռուբլիներ չեն. դրանք կազմում են իւրաքանչիւր տարւայ մէջ, եթէ չասենք հարիւր հազար, գոնէ ամենաքիչը մի քանի տասնեակ հազարներ եկա-մուտ մեր առանց այն էլ միլիոնների օգուտ ու-նեցող երկաթուղու համար. բայց այդ վերջին ե-կամուտը կարծեմ երկաթուղին էլ իր կողմից յանձնում է մի ուրիշ հաստատութեան: Ամեն տեղ էլ կեղեքում են, իսկ տուժող միմիայն ժո-ղովուրդն է:

Աք. Ապ.

ՆԱՄԱԿ ՌՄԲԱԳԻՆ

Թիֆլիս, օգոստոսի 19-ին

«Մշակի» № 92-ում կարդացի Հ. Առաքելեանի թղթակցութիւնը Զուլիկի, որով նա ընթերցողնե-րին յայտնում է իր կարծիքը իմ անձնաւորու-թեան մասին առհասարակ: Պ. Առաքելեանը փո-խանակ լուրջ և վաշխաւ կերպով նկարագրելու իմ երեք տարւայ պաշտօնավարութիւնը Զուլիկ թեմական դպրոցում և օրիորդաց ուսումնարա-նում, զանազան անպատշաճ ածականներով և մեծ մասամբ տարօրինակ և շիւն ծ ու փաստե-րով ուղղում է իմ պաշտօնավարութեան վրա ստուրբ ձգել և ինձ էլ «Մշակի» միջոցով ան-պատում է:

Ես երբեք մտադրութիւն չունիմ իմ անձը պաշտօնանելու մի այնպիսի անձի գրութեան ա-ռիթով: «Մշակ» թերթում, որին հետ ես սոսկ խօսեմ անգամ աւելորդ եմ համարում. բայց և այնու ամենայնիւ հարկ եմ համարում աւել հրա-պարակապէս յարգել ընթերցողներին, որ պ. Ա-ռաքելեան արդէն երկու տարուց ի վեր աշխա-տում է Զուլիկ հայոց հողերը դպրոցներում իր և իր ընդերքի համար պաշտօններ ձեռք բերել, բայց մերժած է նրա բոլոր բերանացի խնդրանքները. այս տարի էլ նոյն հազարաճութիւնը իմ խորհր-դակցութեան արձակեց պ. Առաքելեանի քրոջ օրիորդաց ուսումնարանի մէջ վարած պաշտօնից, որին փորձի համար ընդունած էր իբրև ուսուց-չուհի անցեալ տարի: Ինչ որ վերաբերում է իմ անձնաւորութեան, պաշտօնավարութեան և իմ ուսման ցէնընդ, այդ ամենի մասին հոգևոր բարձ-րագոյն իշխանութեան յայտնի է. հետեւապէս հարկ չը կար և չէ էլ կարող լինել, որ ես իմ ուսման ցէնընդ վերաբերութեամբ Զուլիկում երկու տարի անգործ մնացած Հ. Առաքելեանին հաշիւ ներկա-յացնեի: Իսկ այն զրգարութեան խնդրերը, որ նա իմ պաշտօնավարութեան առիթով բարձրում է իմ վրա և իր քայլից համեմատ «Մշակի» միջոցով իմ պատիւն է չօշափում, այդ մասին օրէնքը արդարապէս կը վճռէ:

Մովսէս Յամուկեան

ՆԱՄԱԿ ՌՄԲԱԳԻՆ

Գարաշիւղազ, 17 օգոստոսի

Անցեալ 1886 տարւայ օգոստոս ամսում կայա-ցաւ Նրեանի ս. Գայանեան հայ օրիորդաց դպրոցի հոգաբարձուների ընտրութիւնը: Այդ ընտրութեան մէջ ես ևս պատիւ ունեցայ ընտրվել հոգաբարձու-նոյն դպրոցի և վեհափառ կաթողիկոսի օրհնու-թեան կոնգակով նորընտիր հոգաբարձուներս հաստատվեցանք այդ պաշտօնի մէջ: Սրանից յե-տոյ անմիջապէս եղան ժողովներ, ընտրվեցան տեսուչ ուսումնարանի, վարձակահատների և վար-ժուհիների, որովհետև ռոճիկներ և այլն: Անցաւ մեր գործունէութեան առաջին տարին, սկսվեցան ընտրութիւնները և վերջացան բաւական աջող: Ե-կաւ միւս ուսումնարանական տարւայ սկիզբը. պէտք էր ընտրել տեսուչ, վարձակահատներ և վար-ժուհիներ (որովհետև առաջնորդները ընտրված էին մէկ տարով): Նոյն իսկ այդ ժամանակը տեղիս թեմական փոխանորդ Գեորգ եպիսկոպոս Սու-րենեանց ուղարկեց Աստախան և նրա տեղ նը-շանակվեցաւ Սուրբաւ եպիսկոպոս Պարզեանց: Այս վերջինը մուտ գործելով իր նոր պաշտօնի մէջ, գործը սկսեց նրանով, որ այցելութիւն

տուեց քաղաքի գրեթէ բոլոր փողեր շատեալ աչքի-ընկնող տներին, ինձ ևս, որպէս մի ազգային, հիմնարկութեան նուազ և աննշան գործիչի, սրբազան պատուեց իր այցելութեամբ: Մի քանի րոպէ խօսակցութիւնը, որ տեղի ունեցաւ մեր մէջ, ոչ այլ ինչ էր, եթէ ոչ ուսումնարանի բա-րեկարգութեան վրա հողալը և մեր միմեանց ա-ջակցութիւնը այդ սուրբ գործի մէջ: Սրբազանը թողեց ինձ և ես լի յուսով ուրախ էի զգում ինձ, տեսնելով վեհափառ աջող ընտրութիւնը:

Որքան յիշում եմ, նոյն իսկ այդ երեկոյեան էր նշանակված հոգաբարձական ժողով սրբազան հօր մօտ Գայանեան ուսումնարանի տեսուչ, վար-ժապետ և վարժուհի ընտրելու և նոցա ռոճիկնե-րի քանակութիւնը որոշելու համար: Հոգաբար-ձուներս թեով չորս, ժողովիկցիներ և, ի հարկէ, սկսեցինք ամեն մէկ մեր կարծիքները յայտնել տեսչի անյարմարութեան մասին, բայց հէնց ա-ռաջին խօսքի վրա Սուրբաւ եպիսկոպոսը ջերմ պաշտպան հանդիսացաւ նախկին տեսուչ տեղ ցուցիչի Մեղանցին: Երկար միջաբանութիւնից յետոյ, սրբազանը ասաց՝ «ես դարմանում եմ թէ ինչ հարկաւոր է մի ծխական ուսումնարանի հա-մար ունենալ հինգ հոգաբարձու, ես անպատճա-ռ ձեր թիւը կը պակասացնեմ և որովհետև դուք տեղ ցուցիքին չէք ուղղում տեսուչ, ես ձեռ չեմ նախագահի, այլ կը տամ ձեռ բարեկարգ քահա-նային նախագահ, իսկ ձեր նշանակած տեսուչ և ուսուցչներին հաստատելը ինձանից է կախված, այն էլ ես գիտեմ» կը հաստատեմ, թէ ոչ:

Սրբազանի խօսքերից պարզ երևում էր, որ եթէ տեղ-ցուցիչին ընտրենք նորից տեսուչ, նա կը նախագահի հոգաբարձական նիստերին, իսկ եթէ չընտրենք նրա ցանկացածին, նա չի նախագահի մեզ, հոգաբարձուների թիւը կը պակասեցնի և մի ուրիշ ընտրած տեսուչ չի հաստատի: Մենք բոլորս, ի հարկէ, ցոյց տուինք նրան կաթողիկո-սից հաստատված կանոնադրութիւնները, որտեղ պարզ ասված է՝ 1) «Տեսուչը, վարժապետը և վարժուհիները ընտրվեն ի հոգաբարձուների և հաստատվեն յառաջնորդաց» 2) «Իրեւելի հա-մօթէին պաշտօնից նշանակվին ի հոգաբարձու-թեան»: Սրբազանը ոչինչ չէր կամենում լսել և իր խօսքերի վրա էր պնդում թէ տեսչին փոխելը հարկաւոր չէ: Վերջապէս տեսնելով հոգաբարձու-ներին տուած իրաւունքները ոչնչացած, ամբողջ հոգաբարձութիւնը թողեց սրբազանի տունը և հեռացաւ այնտեղից, իսկ միւս առաւօտ հոգա-բարձուները մի քանիսը ուղարկեցին իրանց հրա-ժարականները:

Տեղ-ցուցիչին էլ հէնց այդ էր ուղղում, իսկոյն ինքնապէս ընտրում է իրան ցանկացած վար-ժապետներին և վարժուհիներին, ի հարկէ, իբ-ր և տեսուչ և առաջարկում է թեմական փո-խանորդին ի հաստատութիւն և ինքն էլ իրան նշանակում է ռոճիկ և հաստատում է իր պաշ-տօնում:

Յարգալ խմբագիր, նամակիս տեղի տալով ձեր պատուական լրագրի էջերում, յատուկ պարտա-ւորեցած կը լինեք սբ. Գայանեան ուսումնա-րանի հոգաբարձութեանը, որի անդամակից և ես էի: Սրանով թող Նրեանի հայ հասարակութիւնը համոզված լինի իր նրանից ընտրված հոգաբար-ձութեան իրաւունքները սահմանափակված էին, և թող այսուհետև այդ հասարակութիւնը չը դա-տապարտի հոգաբարձուներին, որոնք պատաս-խանատու են նրա առաջ և որոնք պարտական են միշտ հաշիւ ներկայացնել հասարակութեանը իրանց գործունէութեան մասին:

Եւ այսպէս, մինք հոգաբարձուներս, տեսնելով մեր իրաւունքները ոչնչացած, տեսնելով մեր հրաժարականը Գայանեան դպրոցի պատու-թեան մէջ այդ առաջին անգամը չէ, որ հոգա-բարձութիւնը իրան անկարող է զգում տեսուչ Մեղանցի կամաց դէմ մարտելը և տալիս է իր հրաժարականը: Այս խօսքերս ապացուցանելու համար բաւական է մի հակառակ ձգել նոյն իսկ դպրոցի անցեալի վրա:

Նախկին հոգաբարձու Արշակ Տէր-Մարութեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒԻՐԵՐ

ԱԼԷԿՍԱՆԴՐՈՊՈԼԻՑ մեզ գրում են օգոստոսի 31-ից հետեւալը: «Ալեքսանդրօպոլի գաւառի գիւ-ղերից միւր Ղվիւշն է, որ գտնվում է Արագած սարի ստորոտում, մօտ 40 վերստ հեռաւորու-թեամբ: Սրբազան Սուրբաւ եպիսկոպոս Պար-զեանց այժմ Ղվիւշնում է, որտեղ օրհնել է այդ

գիւղի ուսումնարանի բացումը: Մենք հայերս սի-րում ենք բանալ դպրոցական շինութիւններ, բայց նոյն իսկ դպրոցները անմիջապէս գրութեան մէջ են մնում: Մեր դպրոցական գործին յարմար է գալիս հայոց ժողովրդական առածը թէ՛ «ձի չունենք, բայց մտաւ ենք շինում»:

ԴԵՐԵՆՏԻՑ մեզ գրում են: «Այստեղ եկաւ վարդաշէն գիւղից մի հայ-ուղիացի տասն և ութ տարեկան պատանի, որ գործակատար է մի ծխական խանութում: Այդ պատանին աչքի ընկնող տաղանդ ունի դէպի նկարչութիւնը. նա ածուխով նկարում է հասարակ թղթի վրա շատ գեղեցիկ պատկերներ: Նա սովորել է վարդաշէն գիւղի դպրոցում, բայց աղքատ լինելով, միջոց չունի կատարելագործել իր տաղանդը: Այդպէս են կորչում մեզանում անյայտ տաղանդներ»:

ԱՎԱՐԵՄԱՊԱՏԻՑ մեզ գրում են, որ այդտեղ առուուրը կատարելապէս ընկած է. բաղարի վրա վաճառականները անգործ կանգնած են ի-րանց խանութների առջև և հազապիտ մուշտա-րիներին են սպասում:

Օգոստոսի 7-ից սկսած մինչև այսօր սաստիկ շոգեր է անում ոչ թէ միայն Թիֆլիսում, բայց ինչպէս երևում է, և ամբողջ Անդրկովկասում: Յունիս և յուլիս ամիսները աւելի հոյ էին և անձրևային, այն ինչ իսկական ամառը օգոստոս-սին սկսվեցաւ և շարունակվում է և սեպտեմբե-րին: Ոչ մի կաթիլ անձրև չէ գալիս և օդի չո-րութիւնը անտանելի է:

Ստացանք «Նրախայրը» պատկերադարձ գրե-թովը, տպված Թիֆլիսում, ներկայ 1887 թ-ին, Մ. Ռօթինեանի տպարանում, հեղինակութիւն Արշակ Մեհաբեանի, որ «Աղբիւր» ամսագրի մէջ գրում էր «Սրիւնը» կեղծ անունով: Պարոնի պրօզան վատ չէ, բայց բանաստեղծութիւնները շատ թույլ են և ոչինչ կրիտիկային չեն դիմա-նում: Հեղինակը յայտնում է որ «Նրախայրը» ժողովածուն չորս տեղաբաշխ պիտի բաղկանայ՝ առաջինը կրում է «Գարուն» վերնագիրը, որ հրատարակվեցաւ (թէ ևս աշանդ), երկրորդը պի-տի կրէ «Ամառ» անունը, երրորդը՝ «Աշուն», վերջապէս չորրորդը «Ձմեռ»: Հեղինակն ասում է իր առաջաբանում որ թէ և «Գարուն» ու է լոյս տեսնում, սակայն միւսները իրանց ժամա-նակին լոյս կը տեսնեն: Չենք կարծում, քանի որ «Գարուն» միայն աշանդ է լոյս տեսնում, ամա-ռն էլ արդէն անցել է, իսկ աշունը արդէն հա-սել է: Իւրաքանչիւր գրողին արժէ 50 կօպէկ:

ԹԻՖԼԻՍԻ ԳԼՈՐԳՈՎԵՐ փողոցի վրա գտնվող ամանեղեն մի մագաղանի պատուհանում հանդէս են դրված տարօրինակ մոխրամաններ՝ մինի վը-րա փորագրված է «Մշակ» լրագրի, միւսի վրա «Արձագանք» շաբաթաթերթի վերնագիրը:

Այսօր մեր նկարիչ պ. Գեորգ Բաշինջաղեան ուղևորվում է դէպի հարաւային Ռուսաստանի մի քանի քաղաքներ, այն է Բոստով, Նոր-Նախիջևան, Եկատերինօպոլ և այլն, որտեղ զիտաւորութիւն ունի իր նկարների ցուցահանդէսներ բանալ:

Մեզ հաղորդում են հետեւալը: «Ներկա յետա-ձգումից յետոյ վերջապէս Ներսիսեան դպրոցի նորաւարտներից նոցա, որոնք գտնվում են Թիֆ-լիսում, ստացան իրանց աւարտման վկայական-ները, իսկ գաւառներում գտնվողները դեռ յայտ-նի չէ թէ Երբ կը ստանան այդ վկայականները: Բայց տուած վկայականներն էլ դպրոցի վարչու-թիւնը չէ կամեցել օրինաւոր կերպով սրբազնե-տալ, այնպէս որ աւարտածները ստանում են ի-րանց վկայականները լի սխալներով»:

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են, որ «Մշակի» № 91 կարդալուց յետոյ Բազուի երիտասարդների մի յայտնի մարդ զիտաւորութիւն ունի սեպտեմբերի 26-ին մի հեռագրով շնորհաւորել մեր յայտնի նկարիչ պրօֆէսոր Ալվարօվիկո իւսումնայ Ե-բելեանը, ուղղելով հեռագիրը Պետերբուրգ, Գե-ղարուստների Ակադէմիայի հասցեով (ВЪ Ака-демію художеств).

Մի առևտրական երիտասարդ գործակատար գրում է մեզ ԲԱԳՈՒԻՑ հետեւալը: «Անհրաժեշտ է մեր քաղաքում ունենալ գործակատարների հա-մար մի ընթերցարան, մի ժողովարան կամ մի

որ և է այլ վայելուչ հաստատութիւն, որտեղ գործակատարները կարող կը լինէին ցերեկվայ աշխատութիւնից յետոյ մի երկու ժամ անցկացնել լեթէ հաշուէր այն նշանաւոր գումարները, որ ծախսում են մեր գործակատարները, իրանց ժամանակը գինեմանքով քէֆերի մէջ անցկացնելով կարելի է հաստատ անել որ նոյն գումարով կարելի էր վաղուց հիմնել կամ մի ընթերցարան, կամ մի համեստ ժողովարան (կլուբ)։ Գարձնում եմ իմ յարգելի պաշտօնակիցներին ուշադրութիւնը իմ այս առաջարկութեան վրա, աւելացնելով որ ժամանակ է արդէն առաջն առնել մեր մէջ տիրող չարիքին, այն է աննպատակ, մեծածախս, չուայլ քէֆերին և արքեպիսկոպոսին»։

Մեզ գրում են ՂԱՐԱՍՈՒԻ-ԲԱՋԱՐՈՒՅ որ օգոստոսի 20-ին այդտեղ հասաւ նոր հաստատութիւնական առաջնորդ Սաղաթեան, որ մեծ յարգանքով ընդունեցաւ հայ հասարակութիւնից։ Սրբազանը այնուհետեւ պիտի այցելի Ղրիմի միւս գլխաւոր քաղաքները։ Սրբազանին, ինչպէս հաղորդում է թղթակիցը, այցելեցին Ղարաառ-Բաղարում և հայ-կաթոլիկների ներկայացուցիչները, գեր. Սախարեան վարդապետը երեցիփոխանի հետ միասին, նոյնպէս և Սիմֆերոպոլի հայ-կաթոլիկների վարդապետը։

Մեզ գրում են որ այս տարի եղած ուսումնական ժամանակը Ղրիմի շատ տեղերում այդլինքով մեծ փոփոխութիւն կը տեսնուի։ Դրանով էլ շարունակվում է չորային եղանակը և բնակիչները անհամբերութեամբ անձրևի են սպասում։

ՕԴԵՍՍԱՅԻ ռուս լրագրողները հաղորդում են որ հրէաները շարունակում են գաղթել հարաւային Ռուսաստանից դէպի Ամերիկա։ Այս օրերս դարձեալ ճանապարհ ընկան դէպի Ամերիկա մի քանի հրէայ ընտանիքներ Օդեսայից, Բալթայից և Կիևից։ Օդեսայից ուղևորվեց նմանապէս հրէական սինագոգայի գլխաւոր երգիչը, Պետրոս Մանուկովսկի, որ հրաւիրված է Դիւ-Եօրի սինագոգայում որպէս երգիչ, 10.000 ռուբլի տարեկան ուժերով։ Մանուկովսկուն ճանապարհ էր գցում Օդեսայի հրէաների ահագին բազմութիւն։

Օգոստոսի 7-ից սկսած մի ամիս շարունակ չորային եղանակ էր տեսնուի թիֆլիսի մէջ։ Այդ ամիսը ամառային ընթացքում անձրևի ոչ մի կաթիլ չը տեսնուի։ Վերջապէս սեպտեմբերի 5-ին, գիշերը, անձրև եկաւ և հովացրեց եղանակը։

Սեպտեմբերի 4-ին, ժամը 5-ին կէսօրից յետոյ հրէական յայտնվեցաւ թիֆլիսի երկաթուղային կայարանում։ Այդտեղ էին կերտում լի երկու վագոններ։ Հրաշք խուսիք չուտով համեմատ, կարողացաւ առանձնացնել այդպիսի վագոնները, չէ թոյլ տալով որ կրակն անցնի այդպիսի վագոններին մօտակայ շինութիւնների վրա։

Սեպտեմբերի 4-ին, ժամը 5-ին կէսօրից յետոյ թիֆլիսի փոստային վարչութեան մէջ ծառայող մի երիտասարդ նամակաբեր փորձ փորձեց անձնասպանութիւն գործելու, իր ճակատին ընկելով։ Բայց անձնասպանը միմիայն վէրք հասցրեց իրան, այնպէս որ նրան դեռ կենդանի գտան և անմիջապէս հիւանդանոց տարան։

Ստանալը Մոսկույի Լազարեան ձեռնարանի դատաւոր պ. Գրիգոր խալաթի և անից նրա նոր աշխատութիւնը, որ կրում է «Շրագիր հայ ազգագրութեան և ազգային իրաւաբանական տնտեսութիւնների» վերնագիրը։ Հեղինակը սկսում է իր գրքի առաջաբանը այս խօսքերով. «Վերջին տարիները թէ մեր հասարակութեան և թէ մամուլի մէջ օրից օր զգալի է դառնում հայ ազգագրութեան (էթնոգրաֆիայի) մասին նիւթեր հաւաքելու պահանջը»։ Եւ այդ պահանջը աչքի առնելով մեր երիտասարդ գիտնականը ձեռնամուկ է եղել այն զգրքի կազմելուն, որ զբաղւած է այժմ մեր սեզանի վրա։ Եւ իրաւ, պէտք է խոստովանել որ պ. խալաթեանը բարեխղճութեամբ է կատարել իր յանձն առածը. նա այն աստիճան ճշիւ և մանրամասնաբար մշակած ծրարագիր է տալիս հայոց ազգագրութիւնը մշակել ցանկացողներին, որ եթէ տարիների ընթացքում այդ ծրագիրն մի աման անգամ իրագործվի մեր բնականագիտության կողմից, դրանով էլ մեծ ծառայութիւն կը արժանանայ մեր հայրենիքը։

Թիւն արած կը լինի մեր խոսիլիցնային հայոց ազգագրութեան մշակելու գործին։ Հեղինակը իր ծրագիրը կազմելիս օգտուել է բազմաթիւ նիւթերից և աղբիւրներից, որոնք սփռված են մեր այլ և այլ գրքերում, բրտիւրներում, ամսագիրներում և լրագրիւրներում։ Արդէն այդ տեսակ ծրագրի այդ-քան աջողութեամբ կազմելը մասնագիտաց է առնում այն իրողութեան վրա, որ մեր գրականութեան մէջ սկսվել է ազգագրական նիւթերի մշակութիւնը։ Եթէ մեր գրականութիւնը ոչինչ աղբիւրներ չը ներկայացնէր, չէր էլ կարելի կազմել այնպիսի մի ամփոփ ծրագիր, ինչպէս աջողվել է կազմել խալաթեանից։ Գիրքը շատ մաքուր և գեղեցիկ կերպով տպւած է Մոսկույում Հէրէկի տպարանում, ներկայ 1887 թւին և պարունակում է իր մէջ հետեւեղ գլուխները. 1) Աշխարհագրական և պատմական տեղեկութիւններ, 2) Մարդաբանական տեղեկութիւններ, 3) Բնակարանը և իր պարագաները, 4) Զգեստ և զարդ, 5) Կերակուր և խմիչք, 6) Կենցաղ և զբաղմունք, 7) Ընտանեկան բարք և ազգային յատկութիւններ, 8) Հաւատ, 9) Լեզու, զրբ և արուեստ, 10) Ժողովրդական բանասիրտ գրականութեան տեսակները։ Այնուհետեւ զգրքի աւելուածը, որ կրում է «Շրագիր ազգային իրաւաբանական տնտեսութիւնների» վերնագիրը, բաժանվում է հետեւեղ գլուխների. 1) Հասարակական կացութիւն և վարչութիւն, դատ և պատիժ, 2) Քաղաքացիական իրաւունք, 3) Քրէական իրաւունք։ Գիրքը պարունակում է 115 երես և նրա գինը 50 կոպէկ է։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐՇԱՒԱՆՔԸ
ՌՈՒՍԱՅ ԱՐՔԻՊՈՒՆԻ ԴԵՄ

Յայտնի է որ ռուսաց արժէթղթերի մեծ մասը, բացի իրան Ռուսաստանից, առնվում էին Գերմանիայում և յատկապէս Բերլինում։ Մինչև այժմ գերմանացի կապիտալիստները շատ շահաւէտ էին համարում տեղաւորել իրանց կապիտալները ռուսաց արժէթղթերում։ Այդպիսով ռուսաց արժէթղթերը անադին քանակութեամբ հոսելով դէպի Բերլին, գերմանական մայրաքաղաքի բօրսան լի էր լինում միշտ այդ արժէթղթերով և այդ է պատճառը որ Բերլինի բօրսան էր որ եւրօպական բոլոր բօրսաններից ամենից մեծ և ամենից վճռողական ձայն ու նշանակութիւն ունէր միշտ արտասահմանեան ռուսաց կուրսի գնահատութեան և որոշման մէջ։ Բերլինի բօրսան էր որ ամենամեծ կշիւ ունէր արտասահմանում ռուսաց կրէդիտի չափը որոշելու մէջ։

Այժմ, ամենաւանդ երբ ռուսաց կառավարութիւնը հրատարակեց վերջին օրինագիծը, որով Ռուսաստանի արևմտեան նահանգներում արդէվում է գեղմանացիներին հողեր դնել, Բերլինի կապիտալիստները և Բերլինի գերմանական մամուլը սկսեցին մի բացարձակ արշաւանք ռուսաց արժէթղթերի դէմ։ Գերմանացի ազգաւնները գտնում են որ չափից դուրս շատ գերմանական կապիտալներ տեղաւորվում են ռուսաց տոկոսները թղթերի մէջ և ռուսաց ֆոնդերը չափից դուրս շատ տեղ են գրաւում Բերլինի բօրսայի գործերում։ Հիմնելով իրանց խօսքերը այն հանգամանքի վրա որ իբր թէ ռուսաց այժմեան ֆինանսները շատ խառն գրութեան մէջ են, «Kölnische Zeitung» և Բերլինի «Post» լրագիրը երբեմն էլ ապացուցանում են, որ դէպի ռուսաց արժէթղթերն ունեցած անշարժ մեծ հաւատը կարող է մեծ վնաս հասցնել գերմանական կապիտալիստներին և առաջարկում են, որքան հնար է, չուտով աղաւթել ռուսաց ֆոնդերից, նոյն իսկ վնասով ծախել ռուսաց արժէթղթերը, գերմանական վաճառանոցը այդ արժէթղթերից իսպառ մաքրելու համար։

Ռուսաց մայրաքաղաքները լրագիրները իրանց կողմից պատասխանում են գերմանական մամուլի այդ ֆինանսական անողորմ արշաւանքին, որ Ռուսաստանը կարող է անխնայ և հանդիսատարով նայել այդ տեսակ ցոյցերի վրա, քանի որ ռուսաց ֆինանսները, ռուսաց կրէդիտը արտասահմանում և ռուսաց արժէթղթերի կուրսը առնինքն գրանցի ոչինչ վնաս չի կրել, եթէ ռուսաց արժէթղթերի մեծ քանակութիւնը Բերլինի բօրսայից կը տեղափոխվի դէպի Փարիզի բօրսան Օրինակ այդ միջոցը պաշտպանում է և «Вестник Европы» ամսագիրը, ապացուցանելով որ ռուսաց արժէթղթերի կուրսը ընկնելով արտասահմանում, աւելի մեծ քանակութեամբ կը ընկնի, կառուիին նոյն իսկ Ռուսաստանում։ Իսկ կը տուժեն Մայրաքաղաքի ռուսաց մամուլը այդպիսով որ պակասեցրած գնով Բերլինում ծախվող ռուսաց արժէթղթերը դարձեալ կառնեն իրանք ռուսները, կամ նոյն իսկ Ֆրանսիայից։

Ինչպիսիք կը վերջանայ, ինչ հետեւեղ կունենայ գերմանական ֆինանսական այդ բացարձակ արշաւանքը ռուսաց բօրսայի արժէթղթերի դէմ, այդ ցոյց կը տայ մօտիկ ապագան։

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Թաւրիզ, 22 օգոստոսի

Ղարաղալի հայոց վիճակն ևս առաւել տխուր և դառնաղետ կերպարանք ստացաւ։ Անմատ-խան Զէլապիանուն՝ որ չորսիւ խորամանկութեան և խաղախութեան Սայիդիւրաբի (այլապէս աղանց մեծ պաշտօնէի) Գալիքիէն փախած, քանի ամիսներէ ի վեր լուռ դիմեց պահած էր, այժմ առաւել յանդուգն դադանութեամբ սկսաւ երեսն գալ-կողպտելով հայոց գիւղերը, փակելով Ղարաթօփաղ գիւղի եկեղեցին և գերեզմանոցը, որպէս զի հայութեան նշաններն իսպառ անհետաց-նի տուգանելով և տանջելով ամեն մէկ հայի ըստ իր հանգից։ Բողոք և աղաղակ ողորմելի հարստահարեալ հայոց հասաւ սրբազան առաջնորդին, որը դատ և դատաստան դարձեալ սկսաւ շարունակել։ Պարսից գլխաւոր ընդհանուր հրամանատար Ալիքիւրաբն չուտով լսեց ս. առաջնորդի ազդու բողոքը, առանձին պաշտօնեայ ուղարկվեցաւ ի Ղարաղալ և Անմատ-խանն ձերբակալելով բերած դրած են բանտ Գալիքիէն Գործը կը շարունակի խստութեամբ. սեաններ թէ արդեօք կաջողի դարձեալ ոսկու կուտակներով թուղանել դատը և ոտնակոխ անել արքարութիւնը։

Մինչ այս տողերն կը գրէին հեռագրական լուր տարածվեցաւ ստուգապէս, որ Ուրմիայի գաւառի Նախիջևան-թաղայի Սարգիս քահանային սպանել է Մուրադիւմ աղա պարոնը, աղանց կան Մամադ-հաջի-Բաթի Սարհանկին Սոյն այս չարագործ պարսիկը ցերեկով արձակուան կանչեց քահանայի վրա սպանելու դիտաւորութեամբ, սակայն ներկայ անձանց օգնութեամբ՝ քահանան կը խուսափի։ Բայց պարսիկը սպանաւորով կասեց թէ «Գու իմ դոն էս, երեք օրէն յետոյ դարձեալ դու սպանված կը լինիս իմ այս սրով»։ Եւ արդարեւ կը կատարէ նա իր եղեռնագործ դիտաւորութիւնը, երբ Սարգիս քահանան քնած է եղել իր ցորենի կալում գիշեր ժամանակ։ Սրբազան առաջնորդի պահանջմամբ Ալիքիւրաբն հեռագրեց Ուրմիայի դատաւորին, որ քահանայապետան պարսիկին բռնեն և չղթայակապ ուղարկեն Գալիքիէն բանտը, ուր պէտք է դատվի պարսիկը զխաւատութեամբ, որովհետեւ Ալիքիւրաբն երդմամբ այսպէս է խոստացել սրբազան առաջնորդին։

Ձանդեաղորդ գաւառից Մանեղ վիճակէն խըցարեղ գիւղից մի հայ օրիորդ փախցրել է մի պարսիկ Միւրադ-խան-Գուլի անունով և բերել է Ղարաղալ Ալիքիւրաբնի դիմաց։ Օրիորդի այս դառնաղետ դէպքը լսեց ս. առաջնորդն, գրեց ռուսաց հիւպատոսին և իր կողմանէ հարկաւոր կարգադրութիւն արեց. յոյս կայ որ շուտով օրիորդը կը վերադարձվի իր ծնողաց։ Ահա այսպէս է Սարգիս քահանայի հայոց վիճակը։ Բայց դարմանալի հակապատկեր են միմեանց, թուրքիայի և Նիւմանի հայոց հողերը վարչութիւնները։ Երբ Պոլսոյ պատրիարքարան պաւառնեցին կը լսէ այսպիսի կամ այլապէս ազգային անցքեր և գործեր, խալայն և եթ թաղերիները գրելով, կը պահանջէ բարձրագոյն օմանեան դռնէն լուսականութիւն, սակայն Նիւմանեան իշխանութիւնը, երբ պաշտօնապէս միշտ կը լսէ և կը կարգադրէ Պարսկաստանի հայոց ժողովրդին վերաբերեալ տխուր և անտանելի դէպքերը, փոխանակ կարեկցաբար միջամտելու իր ազգի պաշտպանութեան համար և գէթ միանգամ բողոք բառնալու ուղղակի առ բառնալու Դաշը, որ միշտ տրամադրել է դէպի ընդհանուր հանդիտութիւնը իր հպատակաց, դժբաղդաբար կամ լուռ չեղբորութիւն է պահում և կամ թողնում է այդ ամեն ծանր հոգը միայնակ Ատրպատականի առաջնորդի վրա, երբ անհնարին է

տոկալ այս անթիւ անհամար և առօրին պատահած արդետալի անցքերի և այն առանց օգնականի, միայնակութեամբ։ Աւելացրեք այդ ամենայն ասպատակութեանց, հարստահարութեանց վրա նաև կրօնական պրօպագանդան և հաւածանքն։ Պոլսոյ հայոց կրօնական ժողովը կը խորհի և կը հոգայ ուղարկել Տիգրանակերտ օժանդակ հոգեւորական պաշտօնեաներ, որպէս զի հայոց կրօնապիտու-թեան առաջն առնուի, սակայն՝ էջմիածնականը երբեմն կը բաւականանան դրաւոր հարցապահ-դռններ ձեռնապագէս ուղղելով առ առաջնորդն վիճակիս։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Լրագիրները հաղորդում են, որ մարկիզ Սալաթիւրի դիտաւորութիւն ունի հրաժարական տալ առաջին մինիստրի պաշտօնից։

—Այս օրերս Ֆրանսիայի Ան-Լիօզ քաղաքում բացվեցաւ Վօլտէրի արձանը։ Բացումը կատարվեցաւ մեծ շքեղութեամբ։ Երբ արձանը ծածկող վարագոյրը վերցրին, աղալայն լուսաւորութեան մինիստր Սպիլլէր մի երկար ճառ ասեց, որի մէջ ցոյց տուեց Վօլտէրի նշանակութիւնը թէ Ֆրանսիական և թէ համաշխարհային գրականութեան մէջ։

—Խաւաքում խօսքն շարունակում է զոհեր տանել։ Ժողովուրդը այն աստիճան տոգտ է իտալիայի մի քանի տեղերում, օրինակ Սիցիլիայում, որ մի քանի բժիշկներ, որոնք եկած էին ժողովրդի մասին հոգալու համար, սպանվեցան ամբոխից։ Այդ ամբոխը կարծում է, որ բժիշկներն են իրանց հետ բերել վարակիչ ախտը։ Երկու բժիշկներին դաշտի վրա ընկած սպանված դտան։ Մինի կուրճից կացրած էր հետեւեղ արձանագրութիւնը՝ «մահ թո՛ւնաւորողներին և խօսքն բերողներին»։

—Սֆիայից հեռագրում են լրագիրներին, որ Ստամբուլով յայտնել է թէ բուլղարական կառավարութեանը ընդդիմադրութիւն անող քահանաները ձերբակալված կը լինեն։

—«Polit. Corresp.» լրագիրը հաղորդում է, որ Թուրքիան յայտնել է թէ ոչ մի դէպքում յանձն առնելու չէ նախաձեռնութիւնը անմիջական կերպով բուլղարական զորքերում խառնելու և Բօլգարիայի վրա ճնշում գործելու։

—Սպանիայից հեռագրում են, որ այդ երկրի մի քանի տեղերում, օրինակ Մալագայում և Բարցելոնիայում, օգոստոսի 28-ին սաստիկ փոթորիկներ են եղել, որոնք ահագին վնասներ են պատճառել։

—«Journal des Débats» հաղորդում է, որ Ֆրանսիական հիւպատոսը Բուչարովում յետ է կանչվում իր կառավարութեան հրամանով, քանի որ Բալկանեան թերակղզու վրա այժմ տիրող իրերի դրութեան պատճառով յիշեալ հիւպատոսի դրութիւնը անտանելի է դարձել։

—Բուչարովում, ինչպէս հաղորդում են լրագիրները, կատարեալ անիշխանութիւն է տիրում։ Ֆրանսիական հիւպատոսը սպառնացող անանուն նամակներ է ստացել։

—Սֆիայից լրագիրներին հաղորդում են, որ Կօրսուքեան իշխանը սրբազան Անֆիմիս Բօլգարական էկզարխ հրատարակեց յայտնելով որ այլ ևս չէ ճանաչում սրբազան Յովսէփին, որպէս բուլղարական էկզարխ։

—Իրանիւրայի Միլլիտոս քաղաքում ժողոված միտինգը նպատակ ունէր բողոքել պարսկաւորանքի անգամ Օրբիէի ձերբակալութեան դէմ։

—«Новости» լրագիրը հաղորդում է, որ Պետերբուրգի դիվլոմատական շրջաններում տեղեկացան, թէ Աստրխան վճռողական կերպով յայտնել է Բերլինի դաշնադրը ստորագրող պետութիւններին, որ նա ոչ մի դէպքում և ոչ ղրբն թոյլ չի տայ ղլնուորական ոյժ բանեցնել Կօրսուքեան իշխանին օւղարկայից հեռացնելու նըպատակով։

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՍՏՈՒՍԵՒՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 4 սեպտեմբեր։ Պետերբուրգի մի քանի կրէդիտական հաստատութիւններ բարձրացրին տոկոսը մասնաւոր ընթացիկ հաշիւներով 51/2%օրից մինչև 6%օ։

ԲԵՐԼԻՆ, 4 սեպտեմբեր։ Երէկ երեկոյան կում Աալիօսկի հասաւ Ֆրիդրիխսթրոէ։

ՓԱՐԻՑ, 4 սեպտեմբերի փարիզի կոմսը հրա-
տարակեց մի գրութիւն, որի մէջ ապացուցա-
նում է միապետութեան գերազանցութիւնը հան-
րապետութեան վրայ, և յայտնելով որ միապե-
տութեան վերահաստատելը ֆրանսիայում կա-
րող է կատարել օրինական ճանապարհով՝ ազգի
կամքով, աւելացնում է իր այն համոզմունքը, որ
միապետութիւնը կը բարձրացնի ֆրանսիայի ազ-
գեցութիւնը Եւրոպայում, մի և նոյն ժամանակ
պահպանելով զինուորագործական ծանրութիւ-
նը: Այդ գրութեան առիթով կիսապաշտօնական
«Temps» լրագիրը ասում է որ կոմսի գրութիւնը
«չի՛նչ յուզումներ չի պատճառի հանրապետական-
ներին մէջ, բայց միայն խառնակութիւն առաջ կը
բերի պահպանողականներին չըջանում, որովհետեւ
օրէնսդրութեանը այժմ իրանց են սեփականաց-
նում բոնապարտիստների սկզբունքը, այն է ժո-
ղովրդին դիմելը:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 5 սեպտեմբերի Հրատարակված
է կառավարական սենատի որոշումը այն բանի
մասին, որ ամբողջ կայսերութեան մէջ ամեն
տեղ ընակվելու իրաւունք ունեցող հրէաները ի-
րաւունք ունեն նոյնպէս ամեն տեղ պարապել
առևտրով և արդիւնաբերութեամբ ընդհանուր հի-
մունքներով: Այստեղ մասնաւոր բանկերը բարձ-
րացրին փոխառական պարտքերը մասնաւոր
ընթացող հաշիւներով մինչև 6 1/2 պրոցէնտը:
Թագաւորական կալուածները բաժանմունքի կա-
ռավարելը երէկ կիւիլ դնաց, որտեղից կազմուի
անդրկապեան չըջանող թագաւորական Մուրգաբի
կայունաճը կարգի բերելու համար: «Новое
Время» լրագրի խօսքերով, ֆինանսների մինիստ-
րութիւնը կարգադրել է գործաւթղթի հարկ դնել
այն բոլոր օպերացիաների վրայ, որ կատարվում
են փոխառական գրասենականներում, որոնք
մինչև այժմ ազատ էին ամեն տեսակ հարկերից,
10 ԴՊՈՒ, 5 սեպտեմբերի: Եւրոպայի շաւիղը
յայտնի էր մինչև Գաղղիոստանտեան անջրտէր շըր-
ջանը, բայց այդտեղից նրա հետքը կորաւ: Ուրիշ
տեղեկութիւններից երևում է, որ Եւրոպայի Բե-
լուջիստանում է: Պարլամենտական սէսիան
փակելու ժամանակ կարգաւորված դահլիճային ճառի
մէջ ասված է, որ անգլո-ուսական դաշնագիրը
աւգանական սահմանի մասին, որ սիրով ընդու-
նել է էմիրը, կամրապնդել խաղաղ յարաբերու-
թիւնները:

ՎԻԵՆՆԱ, 5 սեպտեմբերի: Այստեղի «Corres-
pondenz Bureau» լրագրի խօսքերով, այս օրերս
Հռոմում խօսքերայից հիւանդացի են 56 մարդիկ,
իսկ Մէսինայում—253, սակայն վերջին քաղա-
քում մեռան 113 մարդիկ:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 6 սեպտեմբերի: «Русскія Вѣдо-
мости» լրագրի հատով ծախելը արգելված է:
«Новое Время» լրագիրը հաղորդում է հաւաստի
աղբիւրներից, որ վերջնականապէս վճռված է
Նիկիդայոսեան (Պետերբուրգ-Մոսկվայի) երկա-
թուղու գիծը յանձնել կառավարութեանը, հէնց
որ այդ գործի համար կը ներկայանան շահաւէտ
պայմաններ: Այսօր բաց է արել իր գործողու-
թիւնները Գերման կօրնֆելդ և ընկ.: Կոմիսիո-
ներական ընկերութիւնը, 50,000 ռուբլի գրաւա-
կանով: Ընկերութեան նպատակն է կատարել առ-
ևտրական և մասնաւոր յանձնարարութիւններ, և

ուղարկել պատուիրոշները պահանջմամբ ամեն
տեսակ առևտրական և լրագրիչներ: Ընկերութիւնը
վերջնում է աշխատանքի համար պրոցէնտական
վարձատրութիւն բերել տուած առևտրականի առ-
ման դնելը:

ԲԵՐԼԻՆ, 6 սեպտեմբերի: Վիլհելմ կայսրը վե-
րադարձաւ դէպի Շտէտտին արած իր ճանապար-
հորդութիւնից:

Կ. ՊՈԼԻՍ, 6 սեպտեմբերի: Ասում են, որ Բ.
Գուռը կուղարկի բոլոր պետութիւններին մի
չըջարեական բազմաթիւ հարցի վերաբերմամբ:
Նիի—ԵՍՐԿ, 6 սեպտեմբերի: Այստեղի անար-
խիստները զաղտնի ժողովներ են կազմում և աշ-
խատում են կազմակերպել հրապարակական մի-
տինգներ, որպէս զի կարողանան բողոքել մահվան
պատժի դէմ, որին դատապարտված են եղել անար-
խիստները Չիկագոյում:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳԻ ԲՈՐՍՍԱ			
Սեպտեմբերի 4-ին			
Ռուսաց 1 ռուբլ	1 օնցիոնի վրայ արժէ	21 3/4	պէնս.
—	Համբուրգի վրայ	181 3/4	պֆ.
—	Փարիզի վրայ	226	սան.
Ոսկի —	արժէ —	8	> 95 Կ.
Մաքսային կուպոններ	—	179	>
Արծաթ —	—	1	> 31
Բօրսային դիվիդենդներ	—	4 3/4	> 6 3/4 0/0
Պետական բանկ. 5 0/0 տոմս 1-ին շրջանի	—	100	>
—	—	99	> 12
—	—	99	>
—	—	99	> 12
—	—	99	>
—	—	99	>
Արեւելեան 5 0/0 փոխառութիւն 1-ին շրջ.	—	—	>
—	—	2-րդ	>
—	—	3-րդ	>
Ներքին 5 0/0 առաջին փոխառութիւն	—	275	> 50
—	—	253	>
5 1/2 0/0 ընդհան.	—	102	> 25
Ոսկեայ ընդհան.	—	193	>
Եօթներորդ կոնսոլիդաւ փոխառու- թիւն.	—	165	> 50
Նոր երկաթուղային ընդհան.	—	99	> 12
5 0/0 գրաւական թղթեր կալուած.	—	—	>
փոխ. կրեդ. ընկ.	—	167	>
Գրաւ. թղ. Ազնւ. բանկի	—	98	> 37
5 1/2 0/0 գրաւական թղթեր խորանի կալուած. բանկի.	—	100	>
6 0/0 գրաւակ. թղ. Խարկովի կալ. բան.	—	102	> 50
—	—	103	>
—	—	102	> 75
—	—	102	> 75
—	—	102	> 75
—	—	102	> 75
—	—	102	> 50
—	—	102	> 50
—	—	102	> 37
—	—	102	> 37
—	—	27 և 43 տ. 99	> 25
—	—	18 և 43 տ. 99	> 50
Վ. օլտիո-կասկի բանկի ակցիաները 733	—	—	>
Ռուսաց երկաթուղիների ղեկաւ. ընկ. 269	—	—	> 50
Բիւրնակ-Վ. օլտիո ընկ.	—	84	>
Ս. Պետերբուրգի քաղաքային օրդ- պացիաներ.	—	96	> 25
Մոսկվայի քաղաք. օրդպացիաներ	—	97	>
Ողեսայի — — — — —	—	96	> 50
Թիֆլիսի քաղաք. կրեդ. ընկ. օբլ.	—	83	> 75
Նոր փոխառութիւն.	—	84	>
Ս. Պետերբուրգի բօրսայի տրամադրութիւնը թղթի է:	—	—	>

Խմբագիր-հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐՇԵՐՈՒՆԻ

COMPAGNIE DES MESSAGERIES MARITIMES
PAQUEBOTS-POSTE FRANÇAIS.

ՖԻԼԱՆՏԻՆԱՅԱՆ ՆԱԽԱԳԻՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ
(ՄԵՍԱԺԵՐԻ ՄԱՐԻՏԻՄ)

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԵԼԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ:
Չորեքշաբթի, 9/12 սեպտեմբերի, առաւօտեան, ԲԱԹՈՒՄ կը հասնի շոգենաւ LE
LABOURDONNAIS (12 ԱՐՈՒՐԻՆԻՆԵ) նաւապետ SIBILET (ՍԻԲԻԼԵ) և կուղևորվի
ուրբաթ օր, սեպտեմբերի 11/23-ին դէպի ՄԱՐՍԵԼ, մտնելով Կ. Պօլիս և յարակցելով
Խաֆա, Պօրտ-Սալիդ և Ալեքսանդրիա դնացող ընկերութեան շոգենաւերի հետ:
Տեղեկութիւնները մասին պէտք է դիմել ԲԱԹՈՒՄ պ. Գ. ԷՍՍԵՆՔԵՐԻՆԵ, իսկ
Թիֆլիսում Գ.ԷՆՈՐԳ ՀԵՅՈՒՐԵԱՆ ՀԵՅՈՒՐԵԱՆՅԻՆ:

2—3

Թիֆլիսի ԲԱՂԱՔԱՑԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ խնդրում է Թիֆլիս քաղաքի պանդոկների,
ուտելիքների խանութների և իջևանների տերերից շնորհ բերել եկող սեպտեմբերի
9-ին առաւօտեան 10 ժամին վարչութեան գրասենեակը իր միջից դէպուտատներ ընտ-
րելու հետեւեալ քառամեակի համար պանդոկների վերաբերեալ կանոնադրութեան 22 և
56 յօդ. համաձայն, միջին ակցիոն կարգադրելու համար:

3—3

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.

ՖԻԼԱՆՏԻՆԱՅԱՆ ՆԱԽԱԳԻՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ
Ն. ՊԱԿԵ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԵԼԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ:
Չորեքշաբթի, սեպտեմբերի 16-ին, ՄԵՆԳՐԵԼԻԱ (MINGRELIE) շոգենաւը, նաւապետ
ԺԻԲՈՒՆԵ (GIBOIN) դուրս կը գնայ Բաթումից դէպի Տրապիզոն, Օրդու, Սամսոն,
Կ. Պօլիս և Մարսէլ: Տեղեկութիւնները մասին պէտք է դիմել ընկերութեան
գործակալներին. Բաթումում պ. Գարանիսին և Թիֆլիսում պ. Բէնօին, նախկին Արժ-
րունի գալլերէում, № 103.

3—4

EXPORTATION-IMPORTATION
CONSTANTIN P. CHEHIA NTZ
MILAN (ITALIE)

Կոնստանտին Պ. ՇԵՆԱՆՅԻ առևտրական գրասենեակը լինելով ՄԻԼԱՆ, և ունենա-
լով ուղղակի յարաբերութիւններ Իտալիայի, Եվրոպայի և Ֆրանսիայի ֆաբրիկանե-
րի հետ, կրնա յանձնարարութեամբ ապրանքներ ծախելու համար հետեւեալները
մետաքս, բոժոժ, մետաքսի և բոժոժի մնացորդ, բուրդ, բամբակ, ցորենեղէն, Նաւթ և
ընդհանրապէս Կովկասեան միւս ամեն տեսակ ապրանքները, որոնք ծախվում են Եւրո-
պայում: Ցանձնարարութեամբ կրնա ղեկի դարձեալ առնել Եւրոպայի ամեն տեսակ ապ-
րանքներ Կովկասի համար: Ամբողջ ապրանքները ստանալուց աժան և ձեռնուռ պայ-
մաններով փող կը տայ ի հաշիւ. մանրամասն տեղեկութեանց համար գրել այս հաս-
ցեով. Monsieur Constantin P. Chéhiantz, № 18, Via Lauro, Milan, (Italie)
MILAN (ITALIE).

ՊԵՏԵՐԲՈՐԳԻ ԲՈՐՍՍԱՅԱՆ ԲԱԺՆԻ ԿՈՂՄԻՏ ԹՈՅԼՈՒԹԻՒՆ ՍՏԱՅԱՆ

ՀԵՂԿԱԿԱՆ ՄԿԵՂԵՂ

ՄԻՇՈՒՆԱՑ

ՄԵՇ ԵՒ ՓՈԲՐ ՄԿԵՆԵՐԸ կատարելապէս ոչն-
չացնելու համար Արկիդիկ զինը 1 ր. 50 Կ. Ար-
կիդիկ 1/4 արժէ 60 Կ.:
Հեղուկ բազիլին ջնեռի դէմ: Սրուակի դի-
նը, վրձինով միայն 1 ռուբլի:
Լու, ցեց, բողոժ ոչնչացնելու փողի Դո-
բակի զինը 1 ր. 20 Կ. դուտապէրչի մեքենան ա-
ռանձին, 1/2 զօրակ 65 Կ.
Սմբաւկայի ոժոռն, Բիս Գուտմանի, ձիերի
Գլխաւոր պահեստ Թիֆլիսում ԷՎ. Գրիվնակի դեղատան ապրանքների մաքա-
ղիւում, Վլադիմիր հիւրանոցի տակ: Զուրաւովի տանը:

53—100

ԲՈՇԿԱՊԵՏ ՌԵՅԼԻՍԻ մօտ աչքացաւով հիւանդների ընդունելութիւնները նորից
սկսվում են սեպտեմբերի 1-ից ամեն օր առաւօտեան (Արսենալի փողոց, № 17)

3—3

Մի պարոն, ունենալով իր մօտ մեծ քանակութեամբ «ՊԱՍԿ» և «ԹՉՈՒԿ» վերնագրով դրե-
րից, ցանկանում է այդ դրերը ն ու լ ի ե լ ձ ը ի ա պ է ս ղ ա ն ա ղ ա ն տ ե ղ ե ը ի հ ա յ ո յ
դ պ ը ո ջ ն ե ի ի ն ա լ մ ի ն մի դպրոց կարող է ստանալ իւրաքանչիւր դրից ոչ ասելի քան երեք օ-
րինակ: Այն դպրոցները, որոնք կամենում են ստանալ այդ դրերից, պէտք է ուղարկեն իւրաքան-
չիւր դրի մի օրինակի համար մի հատ ինչպէ կօպէկանոց փոստային մարկա, իբրեւ ճանապարհա-
ծախ: Ցանկացողները պէտք է դիմեն հետեւեալ հասցեով. Тифлисъ, Редакция «Мшакъ», Теръ-Ми-
каельяну.

9—10

ՄԻ ՎԱՐԺՈՒՀԻ ցանկանում է տներում մասնաւոր դասեր տալ և պարա-
պել երեխաների հետ հայոց լեզուից: Ընդունում է նոյնպէս և զիշերօթիկ աշակերտներ
և աշակերտուհիներ: Հասցէն հարցնել ՍՄԱԿԻ խմբագրատանը:

4—5

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ԱՌԱՋԻՆ ՄԵՍՆԵՒՈՐ ՀԻՄՆԵՒՆՈՑ

(Կուլիա, Վորոնցովի արձանի հանդէպ)
Հիւանդներին ընդունում են ամեն օր

ԱՌԱՌՈՏԵՐԸ
ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆ—10—11 ժ. վերաբուժական, վնասական և ատամի ց.
Կին-բժիշկ ԻՍԱԿԱԿԵԱՆ—9—10 ժ. և 11—12 ժ. կանանց և երեխայոց ց.
ՐՈՒԿՈՎՍԿԻ—10—11 ժ. ներքին, երեխայոց և կանանց ց.
Ա. ԳՈՐԻՎՈ—12 1/2—1 1/2 ժ. աչքի և ներքին ց.
ԱՐՏԵՄԻԿԱ—12—1 ժ. երեքշաբթի և ուրբաթ կանանց ց.
ԵՐԵՎԱՆԵՐԸ
ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆ—6—7 ժ.
ՊՈՊՈՎԵԱՆ—6—7 ժ. կաշուի, ներքին և ջրային ց.
Հիւանդանոցում է մահ կա բարձր Հ. Մ. Օգեբ:
Վճար—50 Կ.: Համախորհրդի (կոնսիլիումի) համար համաձայնութեամբ:
Հիւանդանոցի վերատեսուչ ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆ

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԳ

Չ ա փ ա լ ո Ր վ ա Ր ձ ա տ ը լ թ ե ա մ Ե յ ա ն ձ ն պատրաստել երեխա-
ներին միջնակարգ ուսումնարանների ստորին դասարանները համար: Հասցէի համար
դիմել ՍՄԱԿԻ խմբագրութեանը:

6—15